

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Պարմական գիտությունների թեկնածու

ՄԱՄՎԵԼ ԱՆԵՑԻՆ ԱՆԻԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սամվել Անեցու ժամանակագրությունը փոքրածավալ և համառոտ տեղեկություններ պարունակող ստեղծագործություն լինելով, մինևույն ժամանակ հետազայի բազմաթիվ հավելումներ ներառող միայն մեկ հրատարակություն ունենալով¹, համեմատաբար քիչ է ուշադրության արժանացել, և նրա հեղինակն էլ գրեթե չի ներկայացվել որպես պատմիչ: Անեցուն անդրադարձող գիտնականները, հատկապես նրանք, ովքեր ծանոթ են եղել ոչ միայն ժամանակագրության հրատարակությանը, այլև ձեռագրերին և պատկերացրել են հետազայի հավելումների չափը, խուսափել են պատմիչի աշխատությունը գնահատելուց, իսկ նրանք, ովքեր հրատարակությունը հիմք ընդունելով փորձել են գնահատել աշխատությունը, ակամա ընկել են թյուրիմացության մեջ²:

Սամվել Անեցու հայտնած տեղեկություններն ուսումնասիրողները քիչ են օգտագործել նաև այն պատճառով, որ հրատարակության մեջ տեղ գտած թվագրումները հաճախ տարբերվում են այս կամ այն դեպքի վերաբերյալ այլ աղբյուրներից հայտնի՝ ճշտված թվագրությունից: Բանն այն է, որ Անեցին կազմել է ժամանակագրական աղյուսակներ, որտեղ զուգահեռաբար նշված են թվագրման տարբեր համակարգեր³: Ա. Տեր-Միքելյանը հրատարակության մեջ աղյուսակները հանել է և հիմնականում դրել միայն Փրկչական թվականը, որի հետևանքով Անեցու հայտնած բազմաթիվ դեպքեր ներկայացվել են աղյուսակի միայն մեկ և հաճախ ոչ ճիշտ թվականով: Օրինակ, Սմբատ Ա թագավորի սպանությունը հրատարակության մեջ նշված է Փրկչական ՋԺԷ՝ 917 թվականին⁴, մինչդեռ Հայոց մեծ թվականով նշվում է ՅԿԲ⁵, որը համապատասխանում է այդ դեպքի համար ընդունված

¹ Սամուելի բահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պարմագրաց՝ յաղագս գիւրի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմարութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տեր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893 (այսուհետեւ՝ Անեցի):

² Լ. Բաբայան, օրինակ, Անեցուն համարում է հակասական և պարմական կարևոր անցքերի նկարմամբ «անորոշ վերաբերմունք» ունեցող հեղինակ (Լ. Բաբայան, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պարմագրության, Երևան, 1981, էջ 182-185): Կարծելով, թե Մաթթեոս Ուռհայեցու ժամանակագրությունն Անեցու աղբյուրներից մեկն է, նա գրում է. «Դժվար է բացատրել, թե ինչու հույների կողմից Անիի գրավման մասին գրելիս Սամուելը հարազատ չի մնացել իր աղբյուրին՝ Ուռհայեցուն, չի պահպանել նրա ոգին, իսկ, ասենք, նույն Գագիկի և Մարկոսի շան մասին նույն աղբյուրի գրածը ամբողջությամբ արտագրել է առանց փոփոխելու» (նույն տեղում, էջ 184): Իրականում Անեցին ծանոթ չի եղել Ուռհայեցու երկին (դրա առանձին տեղեկություններ ու հարվածներ Սամվելի ժամանակագրության մեջ մուծվել են հետագայում):

³ Ժամանակագրության սկզբում և վերջում սյունակների բանակն ու պարունակությունը որոշ չափով տարբեր է, բայց հիմնական մասում հաջորդաբար նշված են Փրկչական թվականը, ապա՝ բյուզանդական կայսրերի, Հայոց թագավորների, կաթողիկոսների տարիները և Հայոց մեծ թվականը:

⁴ Անեցի, էջ 98:

⁵ Մաթենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 90բ:

914 թվականին (որոշ դեպքերում Հայոց մեծ թվականին ավելացվում է ոչ թե 551, այլ 552, ըստ այդմ՝ $362+552=914$): Նույն կերպ հրատարակության մեջ Փրկչական թվականով սխալ է նաև Աբաս Բագրատունու (931)⁶ և Աշոտ Գ Ողորմածի (955)⁷ թագավորության սկիզբը, թվականներ, որոնք ժամանակագրության ձեռագրերում Հայոց մեծ թվականով միանգամայն ճիշտ են՝ համապատասխանաբար՝ ՅՀԷ ($377+552$) 929 թ.⁸ և ՆԱ ($401+552$) 953 թ.⁹: Նկատենք, որ Անեցու տեղեկությունների ստույգությունը գնահատվել է դեռևս միջնադարում: «Ջայս գաւազանք եւ չափ ժամանակաց գտաք ճշդիւ սահմանեալ եւ եղեալ Սամուէլի ճշտաբան քահանայի...», գրում է Ստեփանոս Օրբելյանը¹⁰:

Սամվել Անեցու ժամանակագրությունը համակողմանի ուսումնասիրության և վերահրատարակության կարիք ունի, որի շնորհիվ պատմիչի բուն աշխատությունը կառանձնացվի հետազայի հավելումներից: Սակայն վերջիններս նույնպես ուշագրավ տեղեկություններ ունեն (դրանց մի մասը ցայժմ անտիպ է), ուստի նպատակահարմար կլինի Անեցու ձեռագրերի ամբողջական ուսումնասիրությամբ այդ հավելումները նույնպես տպագրել (առանձին բաժնով կամ հեղինակային բնագրից տարբերվող տառատեսակով):

Մենք անդրադարձել ենք Սամվել Անեցու կենսագրությանը, ժամանակագրության ավարտման թվականին ու պատվիրատուին, ինչպես նաև ժամանակագրության հնագույն երեք ձեռագրերին¹¹: Ստորև կանդրադառնանք պատմիչի այն տեղեկություններին, որոնք կապված են Անի քաղաքի պատմության հետ: Դրանց քննությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու հեղինակի՝ տարբեր դեպքերի վերաբերյալ ունեցած մոտեցումների մասին, որոնք երբեմն զգալի չափով տարբերվում են միևնույն դեպքերը նկարագրող այլ պատմիչների տեսակետներից: Եթե նկատի ունենանք, որ մյուս հեղինակները, ինչպես, օրինակ՝ Արիստակես Լաստիվերցին, Մատթեոս Ուոհայեցին, Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին և այլք, ապրում ու աշխատում էին Անիից հեռու, իսկ Սամվելը քաղաքի Մայր տաճարի ավագերեցն էր և իր ժամանակագրությունը գրել է Հոռնկլայում աթոռակալող Կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու (1113-1166) պատվերով, ապա նրա հայտնած տեղեկությունները կարող ենք համարել նաև քաղաքային միջավայրում տիրապետող կարծիքների (կամ որոշ խմբավորման կարծիքի) արտահայտություն:

Ժամանակագրության հնագույն ձեռագրերը¹² հնարավորություն են տալիս ծանոթա-

⁶ Անեցի, էջ 99:

⁷ Անեցի, էջ 100:

⁸ Մարենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 91ա:

⁹ Մարենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 91բ:

¹⁰ Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելյանի, հրատարակության համար պատրաստեց Ա. Աբրահամյանը, Երևան, 1942, էջ 21: Սամվել Անեցու ժամանակագրական հաշվարկներն ուղենիշ են եղել նաև Մխիթար Անեցու համար (**Մխիթար Անեցի**, Մարենան աշխարհավեպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Ն. Մարգարյանի, Երևան, 1983, էջ 31):

¹¹ Կ. Մաթևոսյան, Սամուել Անեցի (կենսագրական լրացումներ), «Էջմիածին», 2003, Զ, էջ 47-57, նույնի՝ Սամուել Անեցու «Ժամանակագրության» ավարտման թվականը և պատվիրատուն, «Պարմա-բանասիրական հանդես», 1992, N 1, էջ 156-162, նույնի՝ Սամվել Անեցու «Ժամանակագրության» հնագույն ձեռագրերը, ակադեմիկոս Ն. Մաթի ծննդյան 140 և մահվան 70-ամյակների փառելիցի ժողովածու, Երևան, 2005, էջ 37-48:

¹² Առաջինը Կամրջաձորի օրինակն է (Մարենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 6ա-108ա): Ընդօրինակել է Ավե-

նալու Անեցու հեղինակային շարադրանքին և համոզվելու, որ 1893 թ. վաղարշապատյան հրատարակության մեջ հետագա շրջանի հավելումները չափազանց մեծ տեղ են զբաղեցնում: Իր նախորդ պատմիչներին թվարկելիս Սամվել Անեցին վերջինը տալիս է Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի անունը, որի պատմությունը հասնում է մինչև 1004 թ., ուստի նախ տեսնենք, թե մեր հեղինակն ինչ է գրել այդ թվականից հետո տեղի ունեցածի մասին:

1176-ին ընդօրինակված Կամրջաձորի օրինակում այս հատվածն զբաղեցնում է ձեռագրի 94ա-107ա էջերը (27 էջ)¹³, հրատարակության մեջ՝ 104-138 էջերը (34 էջ): Հետագա հավելումների չափը պատկերացնելու համար նկատենք, որ այս ձեռագրի երկու էջի տեքստը տեղավորվում է տպագրի մեկ էջում, ընդ որում ձեռագրում շարադրանքն ամենուր էջով մեկ չէ, այլ հաճախ աղյուսակներով (ուստի անհամեմատ փոքրածավալ): Այսինքն՝ ձեռագրի 27 էջի տեքստը կարող էր հեշտությամբ տեղավորվել տպագիր 10-11 էջում, մինչդեռ հրատարակության մեջ էջերի թիվը 34 է:

Ստորև սկզբում նշում ենք Կամրջաձորի ձեռագրի էջը (փակագծում՝ հրատարակության էջը), ապա թվականը (հիմնականում Հայոց մեծ թվականով) և Անեցու հայտնած տեղեկությունը՝ համառոտ:

94ա (104), ՆԾԷ (1008), Կատրամիդե թագուհին ավարտեց Անիի Կաթողիկեի կառուցումը:

ՆԾԹ (1010), Սմբատ Մագիստրոսը կառուցեց Բագնայրի վանքը:

1019, Պետրոս Ա-ի կաթողիկոսության սկիզբը:

94բ (105), ՆՀԱ (1022), Հովհաննես Սմբատի թագավորության սկիզբը (թագավորությունը՝ 20 տարի):

(106) ՆՀԳ (1024), Վեստ Սարգիսը կառուցում է Խծկոնքը և Ծառաքարի վանքը բերդ դարձնում և Ս. Գևորգ խորանարդաձև եկեղեցուն հարակից կառուցում երկու փոքր եկեղեցի՝ Ս. Հովհաննես և Ս. Սեբեդու:

95ա (107), 1043, Աշոտի որդի Գագիկի թագավորությունը (2 տարի):

95ա-96բ (108-109) (աղյուսակներից դուրս՝ էջով մեկ տեքստով) Գագիկի թագադրումը, թույլ կառավարումը և բյուզանդացիների ձեռքով Բագրատունյաց թագավորության վերացումը, Ալփասլանի գործի՝ Անիի գրավումն ու ավերումը:

96բ-97ա (110) Աղյուսակի Հայոց թագավորների ժամանակագրական սյունակում՝ թագավորության կործանման ողբը:

97ա (112) ՇԺԳ (1064) Աստվածածնի տոնի օրը Ալփասլանը գրավեց Անին:

97բ (113), ՇԺԴ (1065) Գրիգորիս Վկայասերի աթոռակալությունը 20 տարի:

Կիս գրքը 1176 թ.: Երկրորդը՝ Հռոմոսի օրինակը (Մալենադարան, ձեռ. թիվ 3613, էջ 1ա-71ա): Գրիչն ու սրագողը Մխիթար Անեցի աբեղան է (12-րդ դ. վերջ): Երրորդը սլավոնականորեն համարում ենք Անիի օրինակ, բանի որ այն 1236 թվականին Կիլիկիա է փարվել Անիից (Երուսաղեմ, Սրբոց Հակոբյանց վանք, թիվ 1801, էջ 387-557, Երևանի Մալենադարան, մանրածավալն թիվ 750): Ձեռագիրը մի կազմի մեջ է ամփոփված հմուտ գրիչ Հովհաննեսի 1187 թ. Հռոմոսում ընդօրինակած Բարսեղ Կեսարացու «Վեցօրեից» գրքի հետ (որպես ձեռագրի երկրորդ մաս):

¹³ Լ. Տեր-Պետրոսյանի վերջերս լույս տեսած մենագրության հավելվածում հրապարակված է Կամրջաձորի ձեռագրի 99ա-108ա էջերում տեղ գտած բնագիրը: Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, Կ. Ա. Երևան, 2005, էջ 474-481:

ՇԺԶ (1067), Վանանդի (Կարսի) թագավոր Գագիկի մահը:

ՇԻԱ (1072), (աղյուսակներից դուրս՝ էջով մեկ տեքստով) Դիոգենես կայսեր պատերազմը Ալփասլանի դեմ, Մանազկերտի ճակատամարտը:

98ա, 98բ, 99ա (114), Ալփասլանի մահը, Մելիքշահի թագավորելը (մեջբերում Հովհաննես Սարկավագից):

99բ (117), ՇԼԱ (1082), Բարսեղ Ա-ի աթոռակալությունը 30 տարի:

100ա, 100բ, (118-120), ՇԽԲ (1093), (աղյուսակներից դուրս՝ էջով մեկ տեքստով), Մելիքշահի մահը, ընդարձակ մեջբերում Հովհաննես Սարկավագից:

ՇԽԳ (1094) Հինգհարյուրամյա շրջանի սկիզբ: Սով:

ՇԽԴ (1095) Դամասկոսի արքա Դըդուշի սպանությունը:

ՇԽԶ (1097), Խաչակրաց առաջին արշավանքը և նրանց նկատմամբ Ալեքս կայսեր թշնամական կեցվածքը՝ ըստ Հովհաննես Սարկավագի:

101ա (121), ՇԾԳ (1104), Մելիքշահի որդի Բեքիարուխի մահը:

ՇԾԴ (1105), Խզըլ ամիրան գրավում է Լոռին և «զուխտսն սուրբ»:

101բ (121-122), ՇԾԶ (1107) Խզըլ ամիրայի սպանությունը Դվինի գրավման ժամանակ:

ՇԾԹ (1110), Անիի Մանուչե ամիրայի մահը:

101բ, 102ա, 102բ (122-123), ՇԿԲ (1113), (աղյուսակներից դուրս՝ էջով մեկ տեքստով), Բարսեղ Անեցու մահից հետո Գրիգոր Գ Պահլավունու աթոռակալությունը, նրա այցը Երուսաղեմ (փառաբանական տողեր): Գևորգ Մեղրիկ վարդապետի մահը: Անտիոքի տիրոջ թունավորումը: Արևի խավարում:

103ա (124) Գրիգոր Գ-ի աթոռակալությունը 50 տարի:

ՇԿԵ (1116), Ալեքս կայսեր մահը և որդու հաջորդելը:

ՇԿԹ (1120), Վրաց Դավիթ թագավորը հաղթեց Էլխագին և Մլիքին:

ՇՀԱ (1122), Դավիթը գրավեց Տփլիսը:

103ա, 103բ, 104ա, 104բ, 105ա (125-128), ՇՀԳ (1124), (աղյուսակներից դուրս՝ էջով մեկ տեքստով), Անեցիները կանչում են Դավիթին և «նենգելով» Ապլսուար ամիրային՝ Անին հանձնում վրացիներին: Ամիրայի որդին պատերազմ է սկսում և երկու տարի անց վերըստին տիրում քաղաքին: Կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունին դժգոհ է մնում այս անցքերից:

105բ (129), ՇՀԸ (1129), Հովհաննես Սարկավագ վարդապետի մահը:

ՇԶ (1131), Անիի Ամենափրկիչ եկեղեցու փլվելը, Դավիթ Ալավկա որդի վարդապետի մահը:

ՇԶԱ (1132), Պատերազմում Անիի Փատլուն ամիրայի սպանվելը և եղբոր՝ Մահմուտի հաջորդելը:

ՇԶԲ (1133), Արևի խավարում:

ՇԶԸ (1139), Երկրաշարժից կործանվեց Գանձակը:

106ա (134), ՇՂԷ (1148), Խաչակրաց երկրորդ արշավանքը:

106բ ՈԳ (1154), Անիի պատերի տակ վրացիները հաղթեցին Սալդուխին (Կարինի ամիրա):

ՈԵ (1156), Վրաց Դեմետրե թագավորի մահը, որդու՝ Դավթի հաջորդելը և երկու տարի անց, սրա մահից հետո, եղբոր՝ Գիորգիի հաջորդելը:

ՈԺ (1161), Վրաց Գիորգիի՝ Անին գրավելը, Շահարմենի գործին կոտորելը:

ՈԺԱ (1162), Գիորգիի՝ Դվինը գրավելը, Ելտկուզի՝ Աշնակ մեծ ավանն այրելը:

107ա (137-138), ՈԺԲ (1163), Խորասանի սուլթանի դեպի Անի արշավելը և բնակչությանը «զարհուրեցնելը», գաղտագողի հարձակումը Գիորգիի վրա, նրա ավարին տեր դառնալն ու իր երկիր վերադառնալը:

Պատմական ահա այս տեղեկություններն է ներկայացնում Անեցին իրենից առաջ՝ շուրջ 160 տարվա ընթացքում կատարված իրադարձությունների համար:

Հեղինակը ժամանակագրությունը կազմել է, իր խոսքերով, «կարճ ի կարճոյ» սկզբունքով, այն է՝ թվական՝ տեղեկություն: Սակայն բարեբախտաբար ժամանակագրական ցանկերը որոշ տեղերում ընդհատվում են 1-2 էջանոց հատվածներով: Դրանցից երեքն ընդարձակ մեջբերում են Հովհաննես Սարկավազի՝ սելջուկների պատմությանը վերաբերող այժմ կորած պատմական բովանդակությամբ թղթերից, որոնք, դատելով հատվածների սկզբում և վերջում պատվիրատուին ուղղված բացատրական խոսքերից, գրվել են հենց նրա ցանկությամբ¹⁴: Իսկ երեքը՝ Գագիկ Բ-ի թագավորությունը (Բագրատունյաց թագավորության անկումը), Գրիգոր Գ Կաթողիկոսի (պատվիրատուի) աթոռակալությունը, վրացիների կողմից Անիի 1124 թ. գրավումը, հեղինակի ինքնուրույն շարադրանքն են:

Հայոց պատմության ժամանակակից հետազոտողները Գագիկ Բ-ի թագավորությունը և Բագրատունյաց թագավորության անկումը ներկայացնում են հիմնականում Արիստակես Լաստիվերցու, Մատթեոս Ուոհայեցու, Հովհաննես Սկիլիցեսի հայտնած մանրամասն տեղեկությունների հիման վրա: Անեցին սուկ օժանդակ աղբյուր է և մեծ մասամբ անտեսված, քանի որ ոչինչ չի ասում Հովհաննես Սմբատի կտակի, Պետրոս Գետադարձի գործունեության, Անիի շուրջ ծավալված ուղղմական բախումների մասին, սակայն միակ պատմիչն է, որն ակնհայտ քննադատական վերաբերմունք ունի Գագիկ Բ-ի նկատմամբ: Անեցին նաև միակն է, որ նշում է նրա թագավորության տեղը. «...Միաբանեալ ազատագունդ զօրացն եւ իշխանացն, յաւէտ եւս պատրիարքին Տեառն Պետրոսի եւ ժողովեցան առ դուռն մեծափառ Կաթողիկէին՝ ի մայրաքաղաքս Հայոց յԱնի եւ հաստատեն զԳագիկ զեղբօրորդին Յովհաննիսի թագաւոր ի վերայ ինքեանս...»¹⁵:

Մատթեոս Ուոհայեցին Գագիկին ներկայացնում է որպես հերոսական կերպար, նույնպիսին է նաև Լաստիվերցու մոտեցումը, թեև Կոստանդնուպոլիս գնալու կապակցությամբ գրում է. «Հաւատաց վասն երդմանցն եւ խաչին, եթէ վասն խակութեան մտացն, եթէ վասն երկիւղածութեան բարուցն՝ ոչ գիտեմ...»¹⁶: Գագիկ Բ-ի ողբերգական ճակատագիրը նրան դարձրել է հայոց պատմության առավել հայտնի ու համակրելի դեմքերից մեկը (նաև գեղարվեստական գրականության շնորհիվ), սակայն նրա ժամանակակից Գրիգոր Մագիստրոսի թղթերում պահպանված տվյալները հակադիր պատկեր են ներկայացնում:

¹⁴ Կ. Մաթեոսյան, Հովհաննես Սարկավազի պարմական թղթերն ըստ Սամվել Անեցու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատությունների ժողովածու, Երևան, 2005:

¹⁵ Մաթեոսյան, ձեռ. թիվ 5619, էջ 95ա, Անեցի, էջ 108: Այս և հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են - Կ. Մ.:

¹⁶ Արիստակիսի Լաստիվերցոյ Պարմութիւն (աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի), Երևան, 1963, էջ 61-62 (այսուհետև՝ Լաստիվերցի):

միշտ է, Մագիստրոսը թագադրությունից շատ չանցած գծովել էր Գագիկի հետ, և այդ շրջանում գրած նրա նամակների մեջ կարելի է միտումնավորություն տեսնել, սակայն Սամվելը, լինելով նաև Անիի բնակիչ, մեկ հարյուրամյակի հեռավորությունից թերևս կարող էր ավելի իրատես գնահատող լինել:

Պատմիչը Գագիկի մասին մասնավորապես գրում է, որ նա «ո՛չ պատերազմական արութեանց ջանայր՝ որով վարի իշխանութիւն՝ մանաւանդ զի առ այնու ժամանակաւն անելի իմն էր ի դէպ էր զքաջանալ՝ զի շփոթումն իսմայէլականացն եւ ի վերայ յառնել սկիւթացոցն..., եւ Յունացն՝ չէր անվրդով՝ զի ընդ կնոջ ձեռամբն նուաճէր եւ նոցայն թագաւորութիւնն¹⁷: Բայց սա (Գագիկը, Կ. Մ.) զի ի մանկութենէ ընդ դպրութիւնս գրոց վարժեալ էր, ի նոսին զքօսնոյր եւ ի տէրութեան ատուրս, զոր իմացեալ ազգին յունաց՝ առ իւրեանս կոչէին խաբկանօք, յաւէտ եւս ի սադրելոյ իշխանացն, որք երդմամբ հաստատեցին պահել զիշխանութիւն նորա աննենգ ի վերայ իւրեանց, եւ ոչ կացին յուխտին Տեառն»¹⁸:

Հետաքրքիր է, որ քահանա-պատմիչը թագավորին հանդիմանում է «գրքերով» տարված լինելու մեջ, մինչդեռ պատերազմում քաջանալու և ամուր կամք դրսևորելու ժամանակն էր: Կարելի է ենթադրել, որ Գագիկ Բ-ի նկատմամբ եղած այսօրինակ քննադատական վերաբերմունքը ոչ միայն պատմիչի կարծիքն էր, այլև հետքագրատունյան շրջանում Անիում ձևավորված տեսակետ: Հատկանշական է, որ անեցի հաջորդ պատմիչը՝ Մխիթար Անեցին, Բագրատունի թագավորների ցանկում Գագիկին ընդհանրապես չի հիշատակում: Թվարկելով թագավորներին՝ նա տալիս է Սմբատ Բ-ի, ապա Գագիկ Ա-ի անունը և շարունակում. «Յովանէս որդի Գագկա՝ ԺԺ (19 տարի): Սա վերջին թագաւոր ի Բագրատունեաց: Աստանաւր սպառեցան թագաւորք ի տանէն Բագրատունեաց»¹⁹:

Բյուզանդական զավթման տարիների մասին Սամվել Անեցին գրում է համառոտ, բայց իրավիճակի հատկանշական կողմերն ընդգծելով. «Եւ կատարած գործոյն կորուստ անգիտ անձանց եւ այլոց բազմաց եղեւ, զի յոյնք զգնացեալն (Գագիկին, Կ. Մ.) ի կղզւոջ արգելին եւ ի տեղի նորա կատապանս արձակէին ամի ամի: Իսկ բնակչաց քաղաքին եւ իշխանաց զմիմեամբք ելանելով անճոռին յոխորտանօք եւ ի միմեանս յարձակեալ խորանակութեամբ եւ ստաբանութեամբ խորհէին զխորհուրդ նենգութեան՝ մատնել զմիմեանս կայսեր՝ բաղբաղելով զձեռն տալն առ հագարացիսն՝ որք եւ իշխանացն անգամ զհայրապետն՝ եւ նորա զնոսա՝ սովին գաղափարաւ զրաբանեալ, զորս յոչ կամս առեալ տանէին ի բնակութենէ իւրեանց: Իսկ մնացեալքն իբրեւ զանտերունչս անկուշեալք կիցս

¹⁷ Բյուզանդիայի վերաբերյալ «... ընդ կնոջ ձեռամբն նուաճէր եւ նոցայն թագաւորութիւնն» ասելով Անեցին ակնարկում է Կոստանդին Ը-ի դուստր թագաժառանգ Ջոնին, որի հետ ամուսնանալով կայսր դարձավ Ռոմանոս Արգիրոսը (1028-1034): Վերջինիս սպանությունը կազմակերպելով՝ Ջոնն կայսերական գահ բարձրացրեց իր սիրեկանին՝ Միքայել Պափլագոնացուն (1034-1041), որի մահից հետո ամուսին ընկրեց Միքայել Կալափապեսին: Սա փորձեց մեջբեկից վերացնել Ջոնին, սակայն պարտվեց և ընդամենը չորս ամիս թագավորելուց հետո հարկադրաբար վանական դարձավ և կուրացվեց (1042): Ջոնի ընկրած հաջորդ ամուսինը Կոստանդին Մոնոմախն էր (1042-1055): Հովհաննես Սկիլիցես, թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1979, էջ 99, 112-113, 133-137:

¹⁸ Մարենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 95ա-95բ, Անեցի, էջ 108:

¹⁹ Մխիթար Անեցի, էջ 67:

ընկենուին եւ այսպիսի սարասի յերկարեալ ամի ԻԱ (21)»²⁰:

Հարկ է նշել, որ Լաստիվերցին և Ուոհայեցին Անիի ներքին իրավիճակի մասին վկայություններ ունեն միայն մինչև բյուզանդացիների մուտքը քաղաք: Ուոհայեցին գրում է, որ երբ անեցիներն իմացան, թե Գագիկն այլևս չի վերադառնալու, «արարին ամենայն քաղաքն ժողով», Հայոց առաջին թագավորների գերեզմանի մոտ ողբացին «զանտիրանալն ազգին Հայոց» և «անէծս ցաւագին կարդային նենգաւորացն Գագկայ»²¹: Իսկ Լաստիվերցին նշում, թե «քաղաքացի գլխաւորքն որ նստէին յԱնի», երբ տեսան, որ Գագիկը հետ չի գալու, խորհում էին քաղաքը ուրիշ մեկին հանձնելու մասին և տարակարծիք էին²²: Մինչդեռ Սամվել Անեցին այն միակ հեղինակն է, որ թեև շատ հակիրճ, բայց գրում է բյուզանդացիների մուտքից հետո քաղաքում տիրող խուճապային մթնոլորտի մասին, երբ քաղաքացիներն ու իշխանները փոխադարձ մեղադրանքներով, զրպարտանքներով ու նենգության միմյանց կայսեր ձեռքն էին մատնում, և այդ բանասարկությունների շրջագծում էր նաև հայրապետը: Այդ ամենից օգտվելով՝ բյուզանդացիները շատերին, իրենց կամքին հակառակ, արտաքսում էին: Իսկ մնացածներն անտերունչ ու նվաստացած էին, և այս վիճակը շարունակվեց 21 տարի:

Ի լրումն այս դժբախտությունների՝ բյուզանդական տիրապետությունն ավարտվում է սելջուկների ներխուժմամբ և Անիի գրավմամբ: Սամվել Անեցին մի շղթայի մեջ է ներկայացնում թագավորության անկումը, բյուզանդական զավթումն ու անփառունակ տիրապետությունը և Ալփաւլանի կողմից քաղաքի գրավումը, որը համարում է երկնային պատիժ: Ծարադրանքը նա շարունակում է ավելի պատկերավոր ոճով. «Յետ որոյ՝ հուր հարաւային բըքոյն շարժեալ եւ եբեր զգազանն մարդախանձ՝ որ հրդեհեալ բնաջինջ արար զազգս մեր, մանաւանդ զԱնի քաղաք, զոր պաշարեալ ատուրս ԻԵ (25) եւ ապա առեալ որպէս ի տեսչութենէ Աստուծոյ, զի յանախիլն մեղաց մերոց՝ զխնամ տեսչութեան Աստուծոյ ի ցասումն բարկութեան շարժէ: Իսկ նոցա ի բերան սրոյ արկեալ՝ անզարմաբար կոտորելով իբրեւ զմայրիս անտառաց՝ շաղախէին զերկիր արեամբ եւ պղծելոց գործովք եւ պոռնկացելոց գնացիւք»²³:

Եզրափակելով հատվածը՝ պատմիչը նշում է, որ թագավորության անկման պատճառով հետագա աղյուսակներում (կանոններում) դադարեցնելու է Հայոց թագավորների տարիների նշումը, քանի որ թեև այլ տեղերում մնացին թագավորներ, ինչպես Կյուրիկյանները և ուրիշներ, սակայն սրանք երբ տեսան գլխավոր տեղի՝ Անիի անկումը, իրենք էլ, սելջուկներից նեղված, թողեցին ու գնացին կայսեր մոտ, և եկվորները տիրեցին երկրին. «Այլ մերն՝ զի դադարեաց իշխանութիւնն թագաւորական՝ պարտ է եւ ի կանոնացս դադարեցուցանել: Զի թէպէտ եւ գոյր ուրուք գաւազան տէրութեան՝ որպէս եւ Կիրիկէին կամ այլ ուրուք, յորժամ տեսին զանհնարին աղէտ կործանման զգլխաւորի տեղոյս՝ անձնա-

²⁰ Մարենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 95բ-96ա, Անեցի, էջ 108-109:

²¹ Մարթնոս Ուոհայեցի, Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Ն. Բարթիկյանի), Երևան, 1991, էջ 106 (այսուհետև՝ Ուոհայեցի):

²² Լաստիվերցի, էջ 62: К. Юзбациян, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, 1988, с. 166-170.

²³ Մարենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 96ա, Անեցի, էջ 109:

տուրք եղեալք ընդ ձեռամբ վիշապին, կամաւ ելին փախստեամբ առ կայսրն յունաց եւ նոքա տիրեցին ընդհանուր աշխարհիս»²⁴:

Անեցին յորովի է ողբում Հայոց թագավորության անկումը: Ծարադրանքը շարունակելով ժամանակագրական հինգ սյունակներով՝ նա Հայոց թագավորների թվականների ներսյունակում նախկին թվաշարի փոխարեն սրտառուչ խոսք է գրում. «Աւա՛ղ զի ոչ գոյր թագաւոր Հայոց, կարծեմ խափանել կամի այս գաւազանս: Բայց թէ զայն չարժեաք ոչ ածէր Աստուած զդառն սուգս ի վերայ մերոյս ազգի, զի ետես Արարիչն զհպարտութիւն մեր եւ հակառակ կալով կսկծեցոյց զմեզ՝ որպէս ի հնումն զԻսրայէլ, զի թէ յանդրանիկն ոչ խնայեաց, զիա՞րդ ի կրտսերս խնայէր, որ նման գոլով կրտսէր որդւոյն քամահեցաք զտէրութիւն նորա»²⁵:

Այսպիսով՝ Անեցին թագավորության անկումը և սելջուկյան ներխուժումը համարում է մեղքերի պատճառով տրված աստվածային պատիժ:

Բացի Գագիկ Բ-ից, այս շրջանի քաղաքական մյուս հայտնի գործիչներին Սամվել Անեցին բնութագրումներ չի տալիս: Խմբիչայլոց ժամանակագրության հրատարակության մեջ տեղ է գտել Անեցու հնագույն ձեռագրերում բացակայող, հետևաբար հետագայի հավելում հանդիսացող մի վկայություն, որն ամենից հաճախ են վկայակոչել այս շրջանի պատմությանը զբաղվողները. «Տէր Պետրոս եւ ազատ Սարգիս եւ Գրիգոր Բջնեցին նենգեցին զԳագիկ եւ զԱնի ետուն ի կայսրն Յունաց. վասն որոյ ելին ի բռնիկ աշխարհէն իւրեանց՝ Տէր Պետրոս եւ Գրիգոր Վասակայ որդին, Գագիկ եւ այլք իշխանք Հայոց եւ եկին ի Հոռոմս»²⁶: Անեցին ոչ միայն նման բան չի գրել, այլև, որքան էլ տարօրինակ թվա, ժամանակագրության մեջ որևէ առիթով չի տվել Գրիգոր Մագիստրոսի անունը²⁷: Իսկ վեստ Սարգսին նա հիշատակում է այլ առիթով որպես եկեղեցաշինարար:

«ՆՀԳ (1024) Մեծապատիւ վեստն Սարգիս՝ զկնի բազում շինուածոց բերդից եւ եկեղեցեաց զհրաշալի վանս զԽցկունս շինեաց, պայծառ պսակաւ զարդարեալ զսուրբ քաւարանն՝ որ ճանաչի անուն սրբոյն Սարգսի:

ՆՀԷ (1028)²⁸ Նաեւ զԾառաքար վանքն՝ բերդ արարեալ վեստն Սարգիս եւ պարսպեալ հաստահեղոյս կրով՝ բրգունս ձուլածոյս, յորում եւ ընդ սրբոյ խորանարդ տաճարին կանգնելոյ յանուն սուրբ Գէորգայ՝ շինէ երկուս այլ յարակիցս գմբեթաւորս՝ զսուրբ Յովհաննէս

²⁴ Մաքենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 96ա-96բ, Անեցի, էջ 109:

²⁵ Մաքենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 96բ-97ա, Անեցի, էջ 110:

²⁶ Անեցի, էջ 107-108, Կ. Մաթևոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության հնագույն ձեռագրերը, էջ 43-44:

²⁷ Կամրջաձորի ձեռագրում Գրիգոր Վկայասերի աթոռակալության մասին վկայությունը՝ «Տէր Գրիգորես անս Ի», այլ գրով շարունակված է՝ «զՎկայասէր, որդի Մագիստրոսի»: Մաքենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 97բ: Նոռոմոսի օրինակում ևս Վկայասերի աթոռակալության մասին փնդելությունը հավելում ունի (հիմնական գրից բաց գույնի թանաքով). «Տէր Գրիգորիս որդի Գրիգորի Մագիստրոսի թողուլ զհայրենի պարիսն հեպենցաւ կրօնաւորութեան եւ բռնադարեալ նսփուցաւ յԱթոռ հայրապետութեան եւ Վկայասէր անուանեցաւ, զնաց ի Կոստանդինուպոլիս եւ բազում ճառս սրբոց թարթմանեաց ի Յունաց ի Հայս» (Մաքենադարան, ձեռ. թիվ 3613, էջ 62բ):

²⁸ Քանի որ վկայությունը աղյուսակի մեջ է, թվականների շարքում այն ընկնում է ՆՀԷ (1028) թվականի դիմաց, սակայն հնարավոր է, որ այս հափվածը նախորդի շարունակությունն է: Ամեն դեպքում Խժկոնքի եկեղեցու, ապա և Ծառաքարի պարիսպների ու մի քանի եկեղեցիների կառուցումը մեկ-երկու փարվա հարց չէր:

եւ զսուրբ Սեբեմոս»²⁹:

Հրատարակության մեջ այս հատվածը զետեղված է Փրկչական 1027 թ. դիմաց նշված տեղեկությունների շարքում, 1029 թ. տեղեկությունից հետո, որի պատճառով գիտական և հանրամատչելի գրականության մեջ խժկոնքի Ս. Սարգիս եկեղեցու կառուցման թվական է համարվում 1029 կամ 1027 թ., «ըստ Սամվել Անեցի պատմիչի հիշատակության»³⁰: Մինչդեռ Անեցու հնագույն ձեռագրերում տեղեկությունը աղյուսակում Հայոց ՆՀԳ (1024) թվականի դիմաց է նշված, հետևաբար հենց դա է Ս. Սարգիս եկեղեցու կառուցման մասին պատմիչի վկայած թվականը³¹:

Վեստ Սարգսի շինարարական գործունեության վերաբերյալ Անեցու դրվատական հաղորդումը³² առաջին հայացքից անսովոր է թվում, երբ հիշում ենք Լաստիվերցու և Ուոհայեցու կամ նրանց հետևող այլ պատմիչների՝ Սարգսին տված բնութագրումները՝ «նեղգաւոր»³³, «անօրէն»³⁴, «ապստամբ»³⁵: Սակայն այս խոսքերն ասվել են Անին բյուզանդացիներին հանձնելու գործում Վեստ Սարգսի ունեցած տխրահռչակ դերակատարությունը նկատի ունենալով: Մինչդեռ Անեցին Սարգսին այս դեպքերի առումով անվանապես չի հիշատակում:

Հայտնի է, որ Վեստ Սարգիսը մեկն էր «ի գլխաւոր ազատացն Հայոց»³⁶, կարևոր դիրք ուներ արքունիքում, անգամ Հովհաննես Սմբատ թագավորի մահվան ժամանակ նրա հոգաբարձուն էր³⁷: Սարգսի կինը Կեչառիսի հիմնադիր Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի դուստրն էր³⁸, որն ուներ երկու եղբայր՝ Վասակ և Ապլջահապ:

²⁹ Մալենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 94բ, ձեռ. թիվ 3613, էջ 60ա, Անեցի, էջ 106:

³⁰ Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու, Երևան, 1942, էջ 311, Н. Токарев, Архитектура Армении IV-XIV вв., Ереван, 1961, с. 208, Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 240, Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 55 և այլն:

³¹ Մալենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 94բ, ձեռ. թիվ 3613, էջ 60ա: Հնագույն ձեռագրերում ի տարբերություն հրապարակության, ուր վանքի անունը նշված է «գիծկոնս» ձևով (Անեցի, էջ 106), պահպանվել են «գիցկոնս» (Մալենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 94բ), «գիւրցկոնս» (Մալենադարան, ձեռ. թիվ 3613, էջ 60ա) ձևերը, որոնք ավելի ճիշտ են, եթե նկատի ունենանք, որ վանքի անվան հիմքում «խուց» (խցեր) բառն է:

³² Կիրակոս Գանձակեցին ակներևորեն Անեցուց է օգտվել, երբ գրում է. «...մեծապարի Վեստն Սարգիս զկնի բազում շինուածոյ բերդից և ևկեղեցեաց շինեաց և զփառաւոր վանքն զիցկոնսն և զեկեղեցին յանուն սրբոյն Սարգսի, և զԾառաբար վանքն բերդ արարեալ՝ պարսպեաց ամրագոյն, և ևկեղեցիս շինեալ ի նմա փառաւորս»: Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 89:

³³ Լաստիվերցի, էջ 62:

³⁴ Ուոհայեցի, էջ 102:

³⁵ Սմբատայ Սպարապետի տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 37:

³⁶ Լաստիվերցի, էջ 57:

³⁷ Լաստիվերցի, էջ 57:

³⁸ 1042 թ. արձանագրության մեջ Վեստ Սարգսի կինը գրում է. «Ես Տիկ(ն)աց Տիկին, դուստր Զրգորոյ Մագիստրոսին և ամուսին Սարգսի արեւելից վնարիս...» (Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 135): Ուսումնասիրողները նրան թյուրիմացաբար նույնացրել են Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) հետ, այսպիսով եզրակացություններ արել վերջինիս բաղաբանական կողմնորոշման և մագիստրոսի կոչում ստանալու ժամանակի մասին (Լևոն, Անի, Երևան, 1963, էջ 322-327, Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, Երևան, 1976, էջ 147, К. Юзбашян,

Սամվել Անեցու հակիրճ հաղորդումը Վեստ Սարգսի՝ Ծառաքարը պարսպապատելու և այնտեղ եղած եկեղեցու կողքին գույգ մատուռների կառուցելու մասին, նպաստում է Ծառաքար ամրոցը Մաղասերդի հետ նույնացնելու տեսակետին, որտեղ 19-րդ դարի սկզբին Ն. Սարգիսյանը տեսել է. «աւերակք երից փոքր մատրանց»³⁹: Հետաքրքրական է Վեստ Սարգսի կառուցած մատուռներից մեկի Սուրբ Սեբեռնոս⁴⁰ կոչվելը, որն այդ անունով աղբյուրներից հայտնի միակ եկեղեցին է հայ իրականության մեջ:

Աղբյուրներում Վեստ Սարգսի անունը վերջին անգամ հիշատակվում է այն առնչությամբ, որ նա համոզում էր Գագիկ Բ-ին Կոտանդնուպոլիս մեկնել (1044): Հայտնի չէ, թե բյուզանդական նվաճումից հետո ինչ է եղել այս հունասեր գործչի հետ: Սակայն հետաքրքիր է, որ Ծառաքարն անցել է նրա կնոջ տոհմակիցներին: Վարդան Արևելցին նշում է, որ 1186 թ. անեցիները մահմեդականներից գրավեցին Ծառաքար բերդը, որն Անիի Բարսեղ եպիսկոպոսի ժառանգությունն էր. «...առին անեցիք զԾառաքար՝ զհայրենիսն տեառն Բարսղի...»⁴¹: Բարսեղ Բ եպիսկոպոսը, որը Սամվել Անեցու ժամանակակիցն էր, Ծառաքարը որպես ժառանգական սեփականություն կարող էր ստանալ իր հորից՝ Հասան Մագիստրոսից⁴², իսկ վերջինիս պապը՝ Վասակը, Վեստ Սարգսի կնոջ եղբայրն էր: Հնարավոր է, որ Վեստ Սարգիսը բյուզանդամետ հայ մյուս ազնվականների նման տեղափոխվել է կայսրության խորքերը: Մանուչե ամիրայի ժամանակ Անիում բարձր դիրք գրաված Ապիրատյանները (Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի հետնորդները) տիրացել են Ծառաքարին, որը, փաստորեն, Բագրատունյաց վերջին շրջանում պատկանում էր իրենց փեսային:

Սամվել Անեցու ժամանակագրության ամենաարժեքավոր հատվածներից մեկը վերաբերում է Անիի 1124-26 թվականների դեպքերին, որի առիթով Ղ. Ալիշանը մեր հեղինակին բնութագրում է որպես «ականատես բնիկ պատմիչ»⁴³:

Հայտնի է, որ 1124 թ. անեցիների կանչով Վրաց Դավիթ Շինարար թագավորը մոտեցավ Անիին, և քաղաքացիները նրա առաջ բացեցին դարպասները՝ փաստորեն ըմբոստանալով Մանուչեի որդի Աբուլասվար ամիրայի դեմ: Այս դեպքը Մատթեոս Ուոհայեցին,

նշվ. աշխ., էջ 162-163, **А. Кажлап**, Армяне в составе господствующего класса византийской империи в XI-XII вв., Ереван, 1975, с. 122): Պաիվապոնի իշխանը մագիստրոսի կոչում ստացել է 1045-ին (**Լասարիվերցի**, էջ 62, **Ն. Ակինյան**, Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 378): Վեստ Սարգսի անունն այն Գրիգոր Մագիստրոսն է, որ հիշարակվում է 1001 թ. Արգականի Ս. Սյրեփանոս եկեղեցու կառուցող Գորգ (Գեորգ) բահանայի և 1003 թ. Կեչառիսի շինարարական արձանագրություններում, սպանվել է 1021 թ.: Պարմիչները նրան հիշարակում են Ապիրատ անունով: (**Գ. Սարգսյան**, Գրիգոր-Ապիրատ Հասանյան. Հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն), «Հին Հայաստանի մշակույթը» ժողովածու 12, Երևան, 2002, էջ 111, **Կ. Մաթևոսյան**, Հազարամյա Կեչառիսի հիմնադրման պարմությունից, «Էջմիածին», 2004, Ա, էջ 77-91):

³⁹ **Ն. Սարգիսյան**, Տեղագրությունք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 125: Մաղասերդի և Ծառաքարի նույնացման հիմնական կոմանը 1222 թ. հիշարակարանն է. «...ի յԱնի քաղաքին դռան ի վերա բերդ եւ անունն Մաղասերդ եւ բերդին անունն Ծառքար...» (ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշարակարաններ (կազմող՝ **Ա. Մաթևոսյան**), Երևան, 1984, էջ 131):

⁴⁰ Մ. Ավգերյանի «Լիակապար վարք եւ վկայաբանությունք սրբոց» հրապարակության մեջ Սեբեռնոս անունն չկա: Արդյո՞ք Եկեղեցու հայրերից Սերենոսի (Սերինոս) անունն է:

⁴¹ **Վարդան Արևելցի**, էջ 136:

⁴² **Ն. Ակինյան**, նշվ. աշխ., էջ 394:

⁴³ **Ղ. Ալիշան**, Շիրակ, էջ 96:

Վարդան Արևելցին, անանուն վրաց պատմիչը և հետագայի հեղինակները ներկայացնում են միևնույն կերպ՝ կատարվածի մեջ շեշտելով կրոնական գործոնի դերը: Ըստ նրանց՝ Աբուլասվարը, ոտնահարելով հայերի կրոնական զգացումները, խլաթում պատրաստել է տալիս, Անի բերում ու 1064-ին մզկիթի վերածված Կաթողիկեի գմբեթին բարձրացնում մի մեծ մահիկ (հնի փոխարեն), որից վրդովված անեցիները կանչում են Դավիթին, որը քաղաքը գրավելով՝ մեծ հանդեսով կրկին օծել է տալիս Կաթողիկեն⁴⁴: Հիշյալ պատմիչները Կաթողիկեի խնդիրը 1124 թվականի դեպքերի պատճառն են համարում:

Սամվել Անեցին Կաթողիկեի հետ կատարվածի մասին լուր է, թերևս այն պատճառով, որ չէր ուզում իրադարձության կրոնական կողմն ընդգծել՝ նկատի ունենալով Աբուլասվարի և իր պատվիրատու Գրիգոր Գ Պահլավունի Կաթողիկոսի հարաբերությունները (այս մասին կնշվի ստորև): Սակայն այդ իրողությունը զանց առնելով՝ Սամվել Անեցին կամա թե ակամա ներկայացնում է անեցիների ընդվզման իրական պատճառը, որն Անիի շուրջ ստեղծված անկայուն վիճակն էր, վրացիների ու սելջուկների պարբերական ասպատակությունները, ավազակությունը, որից ելք գտնելու համար են քաղաքացիները դիմում հիշյալ քայլին:

ԾՀԳ (1124) թվականի դիմաց Սամվել Անեցին աղյուսակներից դուրս, էջով մեկ շարադրանքով գրում է. «Ի բազում հինահարութեանց եւ իսպառսպառ ջնջելոյ ասպատակ արձակելով յաշխարհ մեր՝ երբեմն ի Վրաց, երբեմն ի Սկիւթականաց՝ անհնարին նեղութեամբ, տարակուսեալ տառապեալ բնակիչք քաղաքիս Անոյ եւ Շիրակ գաւառի խորհեցան ելս գտանել մորկին...»⁴⁵: Հենց այս էր քաղաքի ու Շիրակ գավառի բնակչության դժգոհության բուն պատճառը, որը նշում է Սամվել Անեցին, իսկ մյուս հեղինակները ծանուցում են ընդվզման առիթի մասին: Փաստորեն, Անիի շրջանը ենթարկվել է ասպատակությունների ինչպես մահմեդականների, այնպես էլ վրացիների կողմից, և տարակուսած քաղաքացիները, որպես ստեղծված դրությունից դուրս գալու ելք, որոշել են ապավինել քրիստոնյա զորեղ տիրակալին՝ «...ձեռս տալով յարքայն Վրաց ի Դաւիթ, նենգեցին ամիրայն Ապլսուարայ որդոյ Մանուչէի, որ տիրէր քաղաքին յեսո հաւրն մահու, առնլով զթագաւորն ի ներքս, բանալով զդրունս քաղաքին, որ ընդ մտանելն առ ժամայն եղել վնաս արեան եւ ոչ միոյ շնչոյ»⁴⁶:

Անիի այս «անարյուն» գրավումը, սակայն, դրամատիկ շարունակություն է ունենում. «Բայց (Դավիթը, Կ. Մ.) կալեալ զԱպլսուար որդւովքն՝ ընդ իւր խաղացոյց յերկիրն Վրաց, ի մահարար տեղոջ բնակեցուցեալ զնոսա, ուր երկուս յորդոցն, հանդերձ հարբն, վճարեցին զկենցաղոյս»⁴⁷: Պատմիչներից միայն Անեցին է նշում Աբուլասվարի և նրա որդիների

⁴⁴ Ուռեայեցի, էջ 392-393, 400-401, Վարդան Արևելցի, էջ 122-124, Լ. Մելիքսեթ Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 42-43, Սմբատայ Սպարապետի փարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 155, Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 62:

⁴⁵ Անեցի, էջ 125, Հմմտ. Մաքենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 103ա, Մաքենադարան, ձեռ. թիվ 3613, էջ 67ա: Ն. Մարգարյանը նկատել է, որ ժամանակագրության հրապարակության մեջ հիշյալ հարվածում բացակայում են «երբեմն ի Վրաց» բառերը (Ն. Մարգարյան, Նյութաային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, էջ 88):

⁴⁶ Անեցի, էջ 125-126, Հմմտ. Մաքենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 103բ:

⁴⁷ Նույն փնդում:

մահվան պատճառը (այն, որ նրանց բնակեցրել են «ի մահարար տեղուք»):

Պատմիչն այնուհետև գրում է Դավթի մահվան և որդու՝ Դեմետրեի հաջորդելու մասին, ապա նշում, որ Աբուլասվարի անդրանիկ որդին՝ Փատլունը, որը Խորասանում էր, կատարվածի մասին տեղեկանալով՝ շտապում է Անի և պաշարում քաղաքը: Սկսվում է սով, որից փրկվելու համար պարիսպներից դուրս եկող տղամարդիկ կոտորվում են, իսկ կանայք ու երեխաները «վաճառակուր» լինում: Վրացիները ժամանակ առ ժամանակ ուժեր են ուղարկում. «արք ընտիրք, որպես եւ անուանին քաջագաւտիս Իւանէ որդի Ապլեթի, որ բազում արութիւնս ցուցեալ, զասպատակս կոտորէր: Եւ ի զաւրաժողով լինել ի վերայ քաղաքիս Փատլնոյ բազում հեծելովք, առ ոչինչ համարեալ զեկեալս ի պարտութիւն, այլ սակաւ արամբք պատճառ եղեւ փրկութեան քաղաքիս, մարտակցութեամբ բնակչաց սորա»⁴⁸:

Հայրենի քաղաքի հերոսական ինքնապաշտպանության մասին գրելիս հեղինակն, ասես հակիրճության իր սկզբունքից շեղվելով, ոգեշունչ տողերով արձանագրել է անեցի մի խիզախ կնոջ՝ Այծյամի անունը. «Եւ յայսմ պատերազմի առաքինացաւ կին մի ի վերայ պարսպացս, առնացի ստացեալ սիրտ՝ հալածականս առնէր քարամբք զմարտուցեալսն յելանել ընդ պատուարսն, առ ոչինչ համարեալ զխոցուածս նետիցն, զոր վիրաւորէին արտաքուստ: Եւ էր անուն նորա, ըստ արժանի արագութեան իւրոյ, Այծեամն կոչեցեալ»⁴⁹: Այս փոքրիկ հատվածը ցույց է տալիս, որ ամիրաների 60-ամյա իշխանությունը թոթափած անեցիները ժողովրդական բուռն դիմադրություն են ցուցաբերել, կենաց-մահու կոիվ մղել քաղաքի պաշտպանության համար:

Պատմիչը շարունակում է՝ գրելով, որ քանզի վրաց իշխանությունը ամենուրեք չէր հաստատվել, սովն ու մյուս դժվարությունները շարունակվում էին, ստիպված են լինում քաղաքը հանձնել Փատլունին՝ պայմանով, որ հորը դավաճանողներից վրեժխնդիր չլինի, սակայն հետո նա այլևայլ միջոցներով վրեժխնդիր է լինում: Այդ ժամանակ երկիրը թեև խաղաղվում է սովորական դարձած ավազակություններից, սակայն, հեղինակի խոսքերով՝ «յաղագս վերոյգրեալ նեղութեանց եւ վասն հարկապահանջ յափշտակութեանց եկն եհաս ի վերայ մեր վերջին աղքատութիւն եւ տառապանք անհնարինք... եւ աստանար յաւելաւ յաճախապէս մի զհետ միոյ, մինչեւ յաւուրսս յայտոսիկ, որում եմքս»⁵⁰:

Անիի բնակիչների նեղ կացությունը ներկայացնող այս տողերից հետո (հատկապես բնութագրական է «հարկապահանջ յափշտակութեանց» արտահայտությունը), պատմիչը հաղորդում է չափազանց հետաքրքիր մի տեղեկություն: Պարզվում է, որ Գրիգոր Գ Պահաղորդում է չափազանց հետաքրքիր մի տեղեկություն: Պարզվում է, որ Գրիգոր Գ Պահաղորդի Կաթողիկոսը բանակցություններ էր սկսել Անիի ամիրա Աբուլասվարի հետ, և 1120-ական թվականների սկզբներին նրա ու ամիրայի միջև նախնական համաձայնություն էր կայացել կաթողիկոսական Աթոռի Անի փոխադրման համար: Սակայն 1224-26 թթ. դեպքերն ինքնըստինքյան խափանել են այս կարևոր ձեռնարկը, որը հարուցել է հայրապետի զայրույթը: Անեցին գրում է. «Բայց սրբազան հայրապետն եւ առաջնորդն հաւա-

⁴⁸ Անեցի, էջ 126, Նմմր. Մաքենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 104ա:

⁴⁹ Անեցի, էջ 126-127, Նմմր. Մաքենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 104ա-104բ: Անիի հերոսուհու անունը մի շարք հրապարակություններում նշվում է «Այծեմնիկ»: Այն նույնպես ծագում է այժյամ բառից, սակայն այլ անուն է (տե՛ս Ն. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 142:

⁵⁰ Անեցի, էջ 127, Նմմր. Մաքենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 104բ:

տոյ Տէր Գրիգորիս, վասն զի ուխտ սիրոյ ունէր առ Ապլսուար՝ վասն իր սեպհական Աթոռոյս, գալ այսրէն նորա յաւժար կամակցութեամբ, յորժամ լուաւ զհամբաւս զայս՝ առաւել զայրացաւ տրտմագին ցասմամբ առ գործողս իրին»⁵¹:

Սամվել Անեցին այս մասին հայտնող միակ հեղինակն է, ընդ որում՝ խնդրին քաջածանոթ, քանի որ կաթողիկոսի հետ անմիջական կապ ունեցող անձ էր: Փաստն արձանագրելուց հետո Անեցին արդեն իր անունից հանդիմանական տողեր է գրում. «Եւ այս ամենայն լինի... ի յառաւելութենէ մեղաց, զի իբրեւ տուն դառնացողաց արարաք զանձինս մեր...»⁵² և այլն:

Գրիգոր Գ-ի՝ Անիում հաստատվելու մտադրության մասին Սամվել Անեցու հաղորդումը չափազանց կարևոր է ինչպես Հայոց կաթողիկոսության, այնպես էլ Անիի պատմության տեսանկյունից: Հայտնի է, որ Բարսեղ Ա-ն 1105 թ. Անիից Քեսունի հայկական իշխանություն մեկնեց մահամերձ Գրիգոր Վկայասերի կանչով: Վերջինիս մահից հետո Բարսեղը, Ներսես Շնորհալու բնորոշմամբ՝ «զսեպհականն Աթոռ թողեալ ի Շիրականն Անի»⁵³ մնաց Քեսունի Կարմիր վանքում: Այստեղ էլ նա դժբախտ պատահարի հետևանքով մահկանացուն կնքեց 1113-ին, բայց հասցրեց որպես իր հաջորդ հաստատել երիտասարդ Գրիգոր Գ-ին՝ Գրիգոր Վկայասերի քրոջ թոռանը, որը միաժամանակ նաև իր հորեղբոր թոռն էր⁵⁴: Դրանից երկու տարի անց Քեսունի իշխանությունը վերացավ, և Գրիգորը եղբոր՝ Ներսես Շնորհալու հետ տեղափոխվեց Տլուք գավառի Ծովք ամրոց, որը Սմբատ Սպարապետը կոչում է «փոքրագոյն դղեակն Ծովք»⁵⁵, իսկ Շնորհալու վարքագիրը հավելում է, որ «փոքրագոյն դղեակն Ծով կոչեցեալ... ոչ ունէր այնչափ ամրութիւն...»⁵⁶ և անապահով էր: Նույն աղբյուրը վկայում է, որ «ի բնիկ աշխարհէն վտարեալ էին սուրբ հայրապետքն Հայոց, ուր երիցագոյն Աթոռն էր զառաջինն՝ ի Շիրականն անդ...»⁵⁷: Ահա այդ «երիցագոյն» և Բարսեղ Անեցու «սեպհական» աթոռն էր, որ Գրիգոր Գ Պահլավունին համարում էր նաև իրենը և, Անեցու վկայությամբ, քաղաքի ամիրայի հետ «ուխտ սիրոյ ունէր... վասն իր սեպհական Աթոռոյս»:

Գրիգոր Գ Պահլավունին երկրորդ անգամ փորձում է Անի տեղափոխվել 1149-50 թվականներին, բայց հանգամանքների բերումով սեփականում է «զանմատչելի բերդն Հոռմկ-

⁵¹ Անեցի, էջ 127, Նմմր. Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 105ա:

⁵² Նույն տեղում: Հարվածն ավարտելով՝ պատմիչը գրում է. «Իսկ մեր ի կարգ շարադրութեանն գնացուք, զի զանձնէ ամրաստանն» (Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 105ա): Վերջին բառերը համեմատելի է Սամվել Անեցու ուսուցչի՝ Հովհաննես Սարկավագի գործերից մեկի վերնագրին՝ «Ամրաստանութիւն զանձնէ» (Ա. Արրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 127):

⁵³ Տեառն Ներսեսի Շնորհալոյ Հայոց Կաթողիկոսի Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 550:

⁵⁴ Գրիգոր Գ Պահլավունու հոր՝ Ապիրարի մայրը Գրիգոր Մագիստրոս Պահլավունու դուստրն էր (հեղինակը՝ Գրիգոր Վկայասերի քույրը), իսկ Ապիրարի հայրը՝ Ապլջահապը, Բարսեղ Անեցու հոր՝ Վասակի եղբայրն էր (նրանք որդիներն էին 1021 թ. սպանված Գրիգոր Ապիրար Մագիստրոսի):

⁵⁵ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 161:

⁵⁶ Սովերբ հայկականք, ԺԴ, Վենետիկ, 1854, էջ 46-47: Բ. Կիլիսեթեան, Ծովք (Ծովք-Տլուք եւ Հոռմ-Կլայ), Վիեննա, 1904, էջ 10-16:

⁵⁷ Նույն տեղում:

լայն» և այնտեղ հաստատում կաթողիկոսարանը (ուր այն մնում է մինչև 1292 թ.)⁵⁸: Սակայն կաթողիկոսը սերտ կապեր է պահպանում Անիի հետ: Դրա անուղղակի վկայությունը կարելի է համարել ժամանակագրության պատվիրումը քաղաքի ավագերեց Սամվել Անեցուն:

Պատմիչի հաջորդ հաղորդումը հայրենի քաղաքի պատմության մասին նրա ժամանակագրության վերջին նշումն է և վերաբերում է 1061-63 թթ. դեպքերին, երբ վրացիները երկրորդ անգամ գրավեցին Անին և առաջ բերեցին շրջակա մահմեդական իշխանությունների պատասխան գործողությունները:

«Ոժ (1161): Յայսմ ամի թագաւորն Վրաց Գիորգի՝ առ զԱնի՝ ի յունիս ի ԺԳ(13) եւ ապա յօգոստոս ամսամտին՝ կոտորեաց զՇահիարմէն եւթն հազարաւ՝ զԶՌ-սն (80 000) եւ այսորիկ ականատես եղաք մեք: Ի ԳՌ (3000) գրով այն էր զոր գերեաց, թող զանկեալ զդիակունս՝ որ ծածկէր զանդաստանս մեր...»

ՈժԲ (1163): Ապա զաւրաժողով լինեալ սուլտանն Խորասանայ՝ եկեալ ի դուռն քաղաքիս Անույ եւ զարհուրեցոյց զբնակիչք սորա. յետ Լ (30) ատուր գնաց գաղտագողի աղուեսաբար եւ հար զթագաւորն Գիորգի եւ զաւար նորա էառ եւ դարձաւ ի տեղի իւր»⁵⁹:

Այս դեպքերի մասին հայտնում են նաև այլ հեղինակներ, սակայն Սամվելի հաղորդումն աչքի է ընկնում ականատեսի անմիջականությամբ ու հավաստիությամբ: Նա հայ հեղինակներից միակն է, որ արձանագրել է Վրաց թագավոր Գեորգի Գ-ի պարտությունը թշնամու անակնկալ հարձակման հետևանքով⁶⁰:

Ամփոփելով կարող ենք ասել, որ չնայած Սամվել Անեցու նպատակը հակիրճ ժամանակագրություն կազմելն է եղել, սակայն նա բավական արժեքավոր տեղեկություններ է հայտնում Անիի պատմության վերաբերյալ, միաժամանակ սեփական կարծիքն արտահայտում այս կամ այն հարցի առնչությամբ: Ինչպես սելջուկների պատմության մասին Հովհաննես Սարկավագի թղթերից ընդարձակ մեջբերումներ կատարելիս, այնպես էլ Անիի վերաբերյալ հավելյալ մանրամասներ գրելիս պատմիչն ամենայն հավանականությամբ առաջնորդվել է պատվիրատուի ցանկությամբ:

⁵⁸ Մմբարայ Սպարապետի Տարեգիրք, էջ 168, Կ. Մաթևոսյան, Անի, Ս. Էջմիածին, 1997, էջ 61-62:

⁵⁹ Մարենադարան ձեռ., թիվ 5619, էջ 106բ-107ա, հմմտ. Անեցի, էջ 137-138:

⁶⁰ Ն. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 112-113: